բելիք իմ ի մ(ե)ր. եւ ես Նոթեանս(՞) յայտնապէս աղերսելով բողոքեմ առ ձեզ. եւ խնդրապէս զեկուցանեմ որ եւ ես ի ձէնջ յայժմոյս լիալիր եւ (ասուած)ատուր ողորմութի(ւն) խնդրեմ ամ(ենայն) իրաց եւ յայտնապէս. զասանորդն պահանջեմ ի ձէնջ. որ մինչ ի յուստերաց եւ դստերաց որ ըմբուն եւ պատչաճ վարկանեմ (զի)նչ ցայս վ(ա)ս(ն) ազատութե(ան) ս(ուր)ը աթոռոցն. զի ամ(ենայն) է հարկիւ եւ պաղատանօք լի եւ կատարեալ ողորմութի(ւն) խնդրեմ. ըստ ամ(ենայն)ի չափու մինչ ի այրիս եւ ի որբս ժառեմ. զի եւ ն(ո)ք(ա) (մա)ան եւ բաժին ընկալցի(ն) ի նոյն շնորհաց եւ ի պարգեւաց ո(ր)պ(էս) ի վերոյ ճառեցաւ. Եւ ասա ոչ առ ի մեծատուն. կամ որբ եւ այրի. քանզի ամենեքեանքս (պ)արտական եմք հոգով եւ մարմնով այն Բ(2) ս(ուր)ը տանն: Իսկ թէ որքան ուխտ եւ խոստմունք ունիք թէ հոգւոյ եւ թէ մար-մնոյ այսու ամանակի ամէնն շնորհեցէք այն ... անց որ կարի հարկաւոր եւ պատչաճաւոր ժամանակի եթէ քառասնից եւ ժամուց մատաղի եւ ընծայ եւ վ(ա)ս(ն) կենդանեաց եւ ննջեցելոց խոստմունք զոր (խ)ոստացեալ ունիք ի սէրն ա(ստուծո)յ, խնդրեմ զամենն շնորհել ողորմութի(ւն) ս(ուր)ը աթոռոցն թերեւս լինի ազատութ(իւն) եւ թեթեւութ(իւն) ինչ այնքան պարտուցն: Այլ եւ զայս (պ)ատուիրելով պատուիրեմ ձեզ սիրելեացդ իմոց. զի յորժամ տաք եւ նուիրէք զձեր տուրք եւ ողորմութի(ւն) զամենն ի գիր եւ տէֆտէրս առջիք ամենեքեանդ թէ չատ եւ թէ սակաւ թէ որքան եւ իցէ զկէս ըռուպն եւ ի մի ըստակն զամէնն տէֆտէր արարարէք թէ քաղաք եւ թէ գիւղ. եւ թէ այլ ինչ տեղիք որ լինի զի իւրաքանչիւր (տ)եղւոջ տէֆտէր արասցէ երեք մինն առ մեզ առաքեցէք մինն ընդ ձեզ պահեցէք, եւ միւսն տացէք յայնմ որ զողորմութի(ւն) ժողովէ. եւ ամեն ոք որ ողորմութի(ւն) շնորհեն ըստ չափոյ իւր-(եա)նց գրեսցին եւ զանուն իւր(եա)նց. եւ ծնօղացն եւ զտեղւոյն եւ զքաղաքին. որով կոնդակս գրոշմեալ արձանասցի մնալով յ(ի)շ(ա)տ(ա)կ ի մէջ այն Բ(2) ս(ուր)ը տանն որ հ(ա)ն(ա)պ(ա)զ ի մէջ պ(ա)տ(ա)ր(ա)զի եւ ի մէջ պաշտման յ(ի)շ(ա)տ(ա)կի. որ մասն եւ բաժին լինի կենդանեաց եւ հանգուցելոց. եւ զձեզ առ հասարակ ամենեքեանդ արժանաւորս արասցէ երանաւէտ ձայնին որ ասէ եկայք ա(ւր)հնեալք հօր իմոյ ժառանգեցէք զանբսպառ ուրախութի(ւն) որ է ա(ւր)հնեալ յ(ա)ւ(ի)տ(եա)նս ամէն: Գրեցաւ ա(ւր) հնութե(ան) նամակս թվին ՌՃԺ եւ վեց, (1667) մարտի ամսոյ, ԻԲ (22)ի մայրաքաղաքն կոստանդնուպօլիս, ընդ հովանեաւ ս(ուր)ը լուսաւորիչ եկեղեցւոյ:

(ԱՐԱՐԱՏ Էջմիածնայ պաշտօնաթերթ 1915, Փետր. Մարտ էջ 201–205):

Հատուկոտորս պարզապէս շրջաբերական մըն է Երուսաղէմի եւ Էջմիածնայ վանքերու պարտքերուն հատուցման համար: Ցակոբ Զուղայեցի յաջողեր է ինչ որ ժամանակաւոր տուրքեր, այն ատեն մեծ գումար մը հաշուող, 15·000 ոսկի թագաւորին կողմէ իսկ ջնջել տալ: Զուղայեցի ցանկութիւն կը յայտնէ որ մանրամասն հաշիւ պահուի հակառակ պարտքերուն համար ստացուած փոքրագոյն գումարին համար ալ:

Հակառակ այս սրտառուչ կոչին, ուր Էջմիածնայ եւ Երուսաղէմի տաղնապը այնքան որոշ եւ պարզ ցոյց կը տրուի մեզի, տակաւին կան հաւատողներ որ այդ օրերուն Ցակոբ Զուղայեցին մեծագումար գրամներով կը ջանար Եւրոպա... փախչիլ եւ նիւթական խոշոր նուէրներ տանիլ Պապին: Նման որեւէ ենթադրութիւն բնական է այնքան տգայական է որ ցնորամտութիւն պիտի ըլլար ոչ թէ անոր հաւատ ընծայել այլ նոյն իսկ որեւէ չափով լրջօրէն նկատի առնել:

Ցակոբ Զուղայեցին որ այնքան նուիրմամբ եւ զոհողութեամբ արքունի դռները ափ կ'առնէր յանուն ազգային եկեղեցական պարտքին, իրաւամբ նշանաւոր դեղծարար մը պիտի ըլլար եթէ նոյն ատեն կարենար շուրջինները խաբել եւ ըսուածին պէս 700 հսկայական գումար մը հաւաքած ըլլալով, Հռովմ ուզէր փախչիլ Պապին նուէր տալու համար: